

**ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 մայիսի 2001 թվականի N 404  
քաղ. երևան

**1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԻԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԲՈՒՆԱԳԱՂԹԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ  
ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ՊԵՏԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ  
ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«1988-1992 թվականներին Աղբբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

Հաստատել 1988-1992 թվականներին Աղբբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց՝ պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների սեփականաշնորհման կարգը (կցվում է):

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

*Հաստատված է  
ՀՀ կառավարության 2001 թվականի  
մայիսի 14-ի N 404 որոշմամբ*

**Կ Ա Ր Գ**

**1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԻԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԲՈՒՆԱԳԱՂԹԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ  
ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ՊԵՏԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ  
ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ**

1. Մույն կարգով սահմանվում են պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքները (այսուհետև՝ հանրակացարանային բնակելի տարածքներ) դրանցում բնակվող՝ 1988-1992 թվականներին Աղբբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց սեփականաշնորհելու հետ կապված հարաբերությունները:

2. Հանրակացարանային բնակելի տարածքներն անհատույց սեփականաշնորհվում են դրանցում 3 տարվանից ավելի բնակվող՝ 1988-1992

թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց:

3. Հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են տվյալ հանրակացարանը տնօրինող վերադաս կառավարման մարմին՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Դիմումին կից ներկայացվում են իրավասու մարմինների կողմից տրված՝ անձի 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու փաստը և զբաղեցրած հանրակացարանային բնակելի տարածքում անձի 3 տարվանից ավելի բնակվելու փաստը հաստատող տեղեկանքներ:

Վերադաս կառավարման մարմինը դիմումները և նշված տեղեկանքներն ստանալուց հետո 20-օրյա ժամկետում հանրակացարանային բնակելի տարածքների սեփականաշնորհման մասին միջնորդությունները (նշված տեղեկանքների հետ միասին) անվանական կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարություն:

4. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարությունը նշված նյութերը քննարկելուց հետո 15-օրյա ժամկետում դրանք սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ համաձայնեցման:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնության դեպքում հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց՝ մարզերում՝ մարզպետների, Երևանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ կնքելով նվիրատվության պայմանագիր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշման՝ դրանում նախատեսվելով, որ գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվելու են նվիրատու հանդիսացող բնակիչների կողմից:

**(5-րդ կետը փոփ. 07.05.09 N 487-Ն, լրաց., փոփ. 19.11.09 N 1370-Ն, փոփ. 24.05.12 N 639-Ն)**

6. **(6-րդ կետն ուժը կորցրել է 19.11.09 N 1370-Ն)**